

Աղյուսակ 1-ի տվյալներից պարզվում է, որ գյուղատնտեսության ապահովագրական շուկայում ընդամենը 7 240 մլն ԱՄՆ դոլար ապահովագրական գումարում ամենամեծ տեսակարար կշիռը բաժին է ընկնում ԱՄՆ-ին՝ 63,5% կամ բացարձակ առումով 4600 մլն ԱՄՆ դոլար, այնուհետև Կանադային 12,4%, իսկ ամենացածրը, Հարավային Կորեային՝ 0,8%:

Վելուծությունից պարզվում է նաև, որ վերաապահովագրական շուկայում ապահովագրական վճարների 1140 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր գումարում (տե՛ս աղյուսակ 2-ը), ըստ երկրների նույնպես ամենամեծ տեսակարար կշիռը բաժին է ընկնում ԱՄՆ-ին՝ 58,9% (կամ 672 մլն ԱՄՆ դոլար), իսկ ամենացածրը Չինաստանին՝ 0,4% (կամ 4.0 մլն ԱՄՆ դոլար):

Միջազգային փորձը վկայում է, որ գյուղատնտեսական ռիսկերի վերաապահովագրության առավել տարածված ձևերից է համամասնական վերաապահովագրությունը, իսկ էքսցեդենդային, ֆակուլտատիվ և օբլիգատորային վերաապահովագրության տեսակները հազվադեպ են օգտագործվում, բացառությամբ այն դեպքերի, երբ պետք է ապահովել որոշակի մշակաբույսերի պահպանում: Ցանկացած դեպքում տվյալ վերաապահովագրության ժամանակ հաճախորդը ստանում է փոքր ցեղենտային միջնորդային վճար, որը համարվում է ոչ նպաստավոր համամասնական վերաապահովագրության համեմատ:

Ամփոփելով, պետք է նշել, որ այսօր հույժ կարևոր նշանակություն ունի ՀՀ-ում գյուղատնտեսության ապահովագրության և վերաապահովագրության շուկաների ամրագրումն ու դրանց արմատավորումը՝ հիմք ընդունելով արտերկրների փորձը: Առանց ապահովագրության և վերաապահովագրության անհնարին է ՀՀ գյուղատնտեսության զարգացումն ու տնտեսական աճի ապահովումը:

ՎԱՅԵ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՀՊԱՀ ասպիրանտ

ԱՊԱՅՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՈԱՋՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տնտեսվարման նոր հարաբերությունների պայմաններում ապահովագրության համակարգի ներդրումն ունի հույժ կարևոր նշանակություն տնտեսապես զարգացող երկրների համար, ինչպիսին նաև Հայաստանի Հանրապետությունն է: Հատկապես որպես կարևորագույն ճյուղ, գյուղատնտեսությունն ունի բարելավման խիստ կարիք և որի զարգացմանը մեծապես կնպաստի գյուղատնտեսության ապահովագրությունը: Ուստի վերջինիս արմատավորմանը հասնելու համար անհրաժեշտ է մանրամասն հետազոտել զարգացած երկրների փորձը, մասնավորապես կապված ապահովագրական ռիսկերի կառավարման գործընթացի հետ:

Միջազգային փորձը վկայում է, որ գյուղատնտեսության ոլորտին հատուկ ապահովագրական ռիսկերի կառավարման ընդհանուր մոտեցում չկա: Տնտեսության այս ոլորտին հատուկ ռիսկերը տարբեր են ամեն երկրում չնայած գյուղատնտեսության ոլորտում ռիսկերի կառավարման համակարգերի բազմազանությանը կա մի ընդհանուր մոտեցում, այն է պետական մասնակցությունը: Այն կարող է արտահայտվել ապահովագրական համակարգի պետական սուբսիդավորմամբ կամ տարերային աղետների հետևանքով գյուղացիական տնտեսություններին հասցված վնասի մասնակի հատուցումների ձևով: Սակայն Կանադայի փորձը ցույց է տալիս, որ աղետներից հասցված վնասների հատուցումը պետական բյուջեի և այլ միջոցների հաշվին, այնքան էլ արդյունավետ ճանապարհ չի դիտվում և գնալով ավելի շատ երկրներ են ընտրում ապահովագրական ռիսկերից պաշտպանվածության համակարգի զարգացման ուղին, այդ թվում՝

- ֆինանսների կառավարումը՝ կապված եկամուտների դիվերսիֆիկացման հետ
- նոր արտադրական տեխնոլոգիաների նորամուծությունը,
- մարքեթինգային տեխնոլոգիաները՝ կապված վաճառքի ճիշտ բաշխման, պահպանման և այլ գործընթացների հետ,
- ուղղահայաց կոորդինացումը՝ կապված սպառողների պահանջներին համապատասխանեցման և ռիսկերի նվազման հետ: Սակայն այսպիսի ռազմավարությունը նվազեցնում է գներն ու շուկայում գրաված դիրքերը,
- ապահովագրության համակարգի ճիշտ կարգավորումը,
- եկամուտների կայունացման համակարգը:

Ցանկացած կառավարություն գյուղատնտեսական ապահովագրության զարգացման համար (որպես ռիսկերի կառավարում) որոշում կայացնելիս պետք է հաշվի առնի մի շարք գործոններ, կապված՝

- տեղեկատվական բնույթի խնդիրների
- համակարգային ռիսկերի
- վարչարարական բարձր ծախսերի հետ:

Գյուղատնտեսության ոլորտում ռիսկերի կառավարման արդյունավետության գնահատումը պետք է հաշվի առնի հետևյալ հարցերի պատասխանները՝

- տնտեսության մյուս ճյուղերի համեմատ գյուղատնտեսական ռիսկերը մեծ են, թե ոչ
- կարելի է ասել, որ տնտեսական հետընթացը գյուղատնտեսության ոլորտում ավելի մեծ է, քան տնտեսության այլ ոլորտներում
- արդյունավետ է արդյոք պետական միջամտությունը:

Սոցիալական քաղաքականության գործիքները ներառում են աղքատ ֆերմերներին օգնության տրամադրում՝ ռիսկային իրադարձություններից հետո, սակայն օգնության տրամադրման իվնքում պետք է լինի ոչ թե ֆերմեր, այլև աղքատ բառը:

Ներկայումս շատ երկրների կառավարություններ պետական աջակցության համար միջոցների տրամադրմամբ որոշել են զարգացնել գյուղատնտեսության ապահովագրության համակարգը: Սակայն դրանցից առավել արդյունավետ մոտեցում են համարում՝ օգնության տրամադրումը միայն աղետաբեր կլիմայական պայմաններից առաջացած վնասների հատուցման դեպքում: Գյուղատնտեսական մթերքներ արտադրողները կարող են կառավարել ռիսկերը տարբեր գործիքների և ռազմավարությունների միջոցով՝ ներառյալ մասնավոր ապահովագրական ընկերությունների միջոցով իրականացվող ապահովագրությունը: Այսպես, տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություններ ունեցող երկրներում գյուղատնտեսության աջակցության ներքին միջոցառումների առումով կառավարությունները կարող են օգնել ֆերմերներին ռիսկերի կառավարման գործում տարբեր գործիքների միջոցով՝

- տնտեսական միջավայր՝ կայուն մակրոտնտեսական պարամետրեր (փոխանակման կուրս, ինֆլյացիա), նյութատեխնիկական ռեսուրսների ու գյուղատնտեսական արտադրանքի իրացման համար արդյունավետություն ապահովող շուկաներ (օրինակ՝ արտաբորսայական, բորսայական առևտուր)
- օրենսդրություն՝ պարենամթերքի անվտանգության և շրջակա միջավայրի, հողային և աշխատանքային
- սոցիալական և ֆիսկալ քաղաքականություն՝ եկամուտների կայունացման համակարգ, ժամանակային առումով հարկվող եկամտի բաշխում
- գյուղատնտեսական քաղաքականություն՝ տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություններ ունեցող երկրներում աջակցության մակարդակը և միջոցառումների ամբողջականությունը, մեխանիզմների և գործիքների տեսակները, որոնք օգտագործվում են ռիսկերի կառավարման գործում:

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություններ ունեցող երկրներում արտադրողների աջակցությունը (PSE) ներառում է՝

- շուկայական գների աջակցությունը
- բյուջետային սուբսիդավորումը, որոնք հիմնված են որոշակի չափորոշիչների վրա, այդ թվում՝
 1. վճարումներ՝ կապված գյուղատնտեսական արտադրանքի արտադրության հետ
 2. վճարումներ՝ միավոր մակերեսի (մշակաբույսեր) կամ գլխաքանակի (անասուն) հաշվով
 3. վճարումներ՝ կապված սեփականության իրավունքի հետ
 4. վճարումներ՝ նյութատեխնիկական ռեսուրսների օգտագործման համար
 5. վճարումներ՝ կապված ֆերմերային տնտեսությունների եկամուտների հետ

Կառավարությունները սուբսիդիաներ են տրամադրում մասնագիտական տարածաշրջանների սոցիալական ոլորտների ենթակառուցվածքների ու շուկաների ընդլայնման և այլ նպատակների համար: Գյուղատնտեսական ոլորտի աջակցության ամբողջ մակարդակը հաշվարկվում է որպես սոցիալական ոլորտների զարգացման, գյուղատնտեսական արտադրողների աջակցության միջոցների հանրագումարի տեսքով:

Գյուղատնտեսական արտադրանք արտադրողներին աջակցության միջին մակարդակը տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություններ ունեցող (տվյալները 2003թ.) երկրներում միջին հաշվով կազմում է 32%, սակայն այն տատանվում է 2% Նոր Զելանդիայում, մինչև 5% Ավստրալիայում, 62% Հարավային Կորեայում և 69% Շվեյցարիայում, 16% ԱՄՆ-ում, 22% Կանադայում, 26% Թուրքիայում, 34% Եվրամիությունում և 58% Ճապոնիայում:

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություններ ունեցող երկրներում ապահովագրության սուբսիդավորման և եկամուտների կազմավորման աջակցության ծրագրերը ներառում են գյուղատնտեսական արտադրողների աջակցությունը, այդ թվում՝

- հատուցումներ բնական աղետից հետո – երկրների մեծամասնությունում
- բերքի ապահովագրություն – Կանադա, ԱՄՆ, Մեքսիկա, Իսպանիա
- Եկամուտների ապահովագրություն – Կանադա (որոշ մահանգներ) և ԱՄՆ
- հատուցումներ, որոնք հիմնվում են եկամուտների կորստի վրա - Կանադա (CFIP) և ԱՄՆ (գների իջեցման դեպքում վճարվող սուբսիդիաներ)
- եկամուտների կայունացման համակարգեր, այդ թվում՝
 1. Համակարգ, որը հիմնվում է կուտակային հաշիվների վրա (NISA Կանադայում):
 2. Սոցիալական ապահովության համակարգ, որը հիմնվում է սուբսիդավորման ավանդական ծրագրերի (Ավստրալիա, Իռլանդիա, Կորեա) վրա:
 3. Հարկային համակարգեր, որոնք կայունացնում են գյուղատնտեսության ոլորտի արտադրողների եկամուտները ժամանակային առումով (Ավստրալիա, Շվեդիա):

Տնտեսապես զարգացող երկրների համար կարևորվում են, թե ինչպես են սուբսիդիաները ազդում ռիսկերի և արտադրության վրա:

Այսպես, ուսումնասիրություններից պարզվում է, որ ագրարային քաղաքականության բոլոր գործիքները ազդում են ռիսկերի վրա՝ ներառյալ մասնաշաղկապական ռիսկերի: Այդ գործիքների թվին են դասվում՝

- սուբսիդիաներ, որոնք կապված չեն արտադրության հետ
- օրենսդրական փաստաթղթեր, նյութատեխնիկական ռեսուրսների գնման համար անհրաժեշտ սովորական սուբսիդիաներ, որոնք ազդում են արտադրության մակարդակի ու ստացվող եկամտի վրա
- սուբսիդիաներ, որոնք կապված են ռեսուրսների օգտագործման հետ և ազդում են տնտեսավարող սուբյեկտների եկամուտների վրա:

Որոշակի գործիքներ ձևավորում են կայունացման մեխանիզմներ՝ կապված եկամուտների ապահովման համար տրվող սուբսիդիաների հետ և այնպիսի սուբսիդիաներ, որոնք հիմնվում են արտադրության ծավալի վրա:

Ռիսկերի ազդեցության նվազման ուղղությամբ կատարվող հատուցումները, սովորաբար, դուրս են մղում շուկայական ռազմավարությանը, մանավանդ, եթե դրանք ուղղված են միևնույն ռիսկի աղբյուրին: Սուբսիդիաների օգտագործումը կարող է ունենալ նաև հակառակ ազդեցություն: Այսպես, այն սուբսիդիաները, որոնք ուղղված են ռիսկերի ազդեցության նվազմանը, վերջնական արդյունքում մեծացնում են արտադրողների եկամուտների տատանումները: Դրա համար անհրաժեշտ է ուղղորդել ռիսկերի ազդեցության նվազման և կառավարման ուղղությամբ կատարվող այնպիսի միջոցառումներ, որոնցով կապահովվի հավասարակշռություն՝ շուկայական մեխանիզմների ու պետական սուբսիդիաների միջև:

Գոյություն ունեն նաև արտադրության հետ կապ չունեցող եկամուտների աջակցության միջոցառումներ՝

- որոնք կարող են օգտագործվել արտադրության մակարդակի նկատմամբ որոշակի ժամանակահատվածում
- սուբսիդիայի գումարը չպետք է հիմնվի բազիսային ժամանակաշրջանից հետո ցանկացած տարվա տվյալների վրա (արտադրության ծավալը և կազմակերպման ձևը, արտադրանքի զինը)
- արտադրողները չպետք է մատակարարեն ապրանքներ, հատուցումներ ստանալու համար:
Ընդհանուր առմամբ կարևորվում է նույնպես յուրաքանչյուր երկրի կառավարության մասնակցությունը ապահովագրական ծրագրերին և սպասվելիք եկամուտների կայունացմանը, հետևյալ հատուցումների դեպքում՝

- հատուցումները կատարվում են եկամուտների իջեցման միջին ցուցանիշից 30%-ից ավելիի դեպքում
- հատուցման գումարը փոխհատուցում է վնասը կատարվածի մինչև 70%-ի չափով
- հատուցումները կախված են արտադրողների եկամուտներից և կախված չեն արտադրության ծավալներից ու իրացման գներից
Միաժամանակ բնակլիմայական պայմաններից կախված աղետաբեր վնասների համար՝
- հատուցումները վճարվում են կառավարության կողմից աղետաբեր իրադարձության պաշտոնապես ճանաչմամբ՝ պայմանով, որ արտադրական վնասները գերազանցում են արտադրության միջին ցուցանիշի 30%-ը
- հատուցումները ուղղվում են միայն վնասների փոխհատուցմանը: Առավելագույն հատուցման չափը պետք է հավասար լինի վերականգնման կամ հատուցման արժեքին
- բոլոր այս հատուցումները՝ ներառյալ եկամուտների ապահովագրությունը, չպետք է գերազանցի արտադրողի վնասները:

Վերոնշյալներն ավելի պարզ պատկերացնելու համար ներկայացնենք ըստ տարբեր երկրների համապատասխան տվյալներ թիվ 1 և 2 աղյուսակներով:

Աղյուսակ 1-ի և 2-ի տվյալներից պարզվում է, որ ուսումնասիրվող տարիներին աղետաբեր հատուցումներն ավելի շատ նկատելի են Ճապոնիայում, որը 2000թ. տվյալներով կազմել է 73% նախատեսված ապահովագրական գումարներից, իսկ Եվրամիության համար այն 2001-2002թթ. կազմել է 58%: Այս երկրներից Մարրոկոյում այն 2001թ. կազմել է 100%, իսկ Չիլիում՝ 43%:

Աղյուսակ 1.

Ապահովագրական սուբսիդիաները և հակափողային հատուցումները տնտեսական համագործակցության ու զարգացման կազմակերպություններ ունեցող անդամ երկրներում, %

	Եվրամիություն 2001-2002թթ.	ԱՄՆ 2001թ.	Կանադա 2001թ.	Ճապոնիա 2000թ.
Եկամտի ապահովագրություն	2	0	22	0
Աղետաբեր հատուցումներ	58	18	0	73
Ապահովագրության աջակցության միջոցառումներ	40	23	41	27
Այլ միջոցառումներ	0	59	37	0

Աղյուսակ 2.

Ապահովագրական սուբսիդիաները և հակափողային հատուցումները այլ երկրներում 2001թ, %

	Չինի	Մարոկո	Թունիս	Թուրքիա
Եկամտի ապահովագրություն	57	0	0	0
Աղետաբեր հատուցումներ	43	100	0	0
Ապահովագրության աջակցության միջոցառումներ	0	0	0	0
Այլ միջոցառումներ	0	0	0	0

Միաժամանակ կարևորվում է թե ինչպիսին է գյուղատնտեսական մշակաբույսերի ապահովագրության և աղետաբեր վնասների հատուցման իրավիճակները տնտեսական համագործակցության ու զարգացման կազմակերպություններ ունեցող անդամ երկրներում, ներկայացնենք հետևյալ հաջորդականությամբ՝

- Ավստրալիա - գյուղական վայրերի կայունացման համակարգ՝ ցիտրուսային մրգեր արտադրողներին սուբսիդիաներ և հատուցումներ աղետաբեր բնակլիմայական պայմաններից հետո, միջոցների ներդրում օգնության տարածաշրջանային հիմնադրամներում, սուբսիդացվող վարկային տոկոսադրույքներ և այլն
- Եվրամիություն - փոխհատուցումներ աղետաբեր բնակլիմայական պայմաններից առաջացած վնասներից, ռիսկային իրավիճակներից հետո գյուղատնտեսական նշանակության հողերի վերականգնում
- Հունգարիա - երաշտից վնասների փոխհատուցում
- Ճապոնիա - ապահովագրավճարների սուբսիդավորում պետության կողմից, փոխառություններ բնակլիմայական վատթարագույն պայմաններից տուժած արտադրողներին,
- Նոր Զելանդիա - ֆերմերներին խորհրդատվական ծառայությունների ստացման համար կատարվող վարչական ծախսերի փոխհատուցում, որոնք վնասներ են կրել երաշտից, ինչպես նաև տնտեսություններին մատակարարվող ջրի ծախսերի փոխհատուցում
- Նորվեգիա - գյուղ մշակաբույսերի բերքահավաքի վնասները, որոնք պայմանավորված են բնակլիմայական պայմաններով
- Լեհաստան - ջրհեղեղից առաջացած վնասների և արտադրանքների վերականգնման հետ կապված ծախսերի փոխհատուցում
- Սլովակիա - վնասների մասնակի փոխհատուցում
- ԱՄՆ – օգնության ծրագիր այն տնտեսություններին, որոնք չեն ապահովագրվել (NAP), բնակլիմայական ռիսկերից կերային և ֆուրաժային մշակաբույսերին պատճառած վնասները, անասնազվաքանակի վերացումը, փոխառություններ տուժած ֆերմերներին

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունների անդամ չհանդիսացող երկրներում

- Արգենտինա - ֆերմերներին տրամադրվող փոխառություններ՝ արտադրության զարգացման և վերաֆինանսավորման համար
- Բրազիլիա - գյուղատնտեսության ապահովագրության ծրագիր
- Չիլի - գյուղատնտեսության ապահովագրություն և արտակարգ գյուղատնտեսական հիմնադրամ
- Կիպրոս - գյուղատնտեսության ապահովագրության կազմակերպությունների մասնակի ֆինանսավորում
- Իսրայել - ապահովագրության ազգային ծրագրի սուբսիդավորում, կանխավճարներ ֆերմերներին, չապահովագրված ֆերմերներին ֆինանսական օգնության տրամադրում, բերքի ապահովագրության դեպքում վարչական ծախսերի սուբսիդավորում:

Այստեղից հետևություն, որ գյուղատնտեսության ապահովագրության գծով ռիսկերի նվազեցման նպատակով կատարվում են, ոչ միայն տնտեսական համագործակցության երկրների աջակցության ծրագրերի իրականացումը, այլ նաև յուրաքանչյուր երկրի կառավարության ֆինանսական սուբսիդավորումը: Միաժամանակ ուսումնասիրությունների արդյունքում հանգում ենք հետևյալին, որ գյուղատնտեսության ապահովագրությունը ՀՀ-ում արմատավորելու համար, որպես առաջնային և պարտադիր խնդիր պետք է կարողանալ ներգրավել ֆինանսական աջակցության ծրագրերին, իսկ տրամադրված գումարներն օգտագործել նպատակային, ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով՝ հսկողության ներքո:

ՍԵՐՁԵՑ ՂԱԶԱՐՑԱՆ

*ՀՀ ԳԱԱ Մ. Զորանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի գիտության գծով փոխտնօրեն, տ.գ.դ., պրոֆեսոր*

ՅԵՆՐԻԿ ՄԿՐՏՁՅԱՆ

տնտեսագիտության թեկնածու

ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՇԱՐԺԸՆԹԱՅԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հայաստանի տարածքը տիպիկ լեռնային է՝ բարդ ու բազմազան բնական և տնտեսական բնութագրերով: Այդպիսին է բնականաբար նաև նրա հողային ծածկը: Ընդհանրապես ցանկացած տարածքում հողածածկը ձևավորվում և զարգանում է տվյալ վայրի բնական, այնուհետև նաև տնտեսական գործոնների համատեղ ազդեցության ներքո և դրանց հետ միասին կազմում է մեկ միացյալ բնական-տնտեսական համալիր:

Կլիմայական պայմանների առումով Հայաստանի ինտենսիվ գյուղատնտեսության գոտիների տարածքների մեծամասնությունը համարվում է ռիսկային, որտեղ արտադրության ճակատագիրը մեծ չափով կախված է տարվա եղանակային պայմաններից: Ցածրադիր և նախալեռնային գոտիներում, ինչպես նաև լեռնային գոտու տարածաշրջանների գերակշիռ մասում ոռոգումը նորմալ և կայուն բերք ստանալու անհրաժեշտ պայմանն է: Այս հանգամանքը պետք է անպայման հաշվի առնել արտադրության կազմակերպման, նրա մասնագիտացման խնդիրները լուծելիս: